

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Գեոդեզիայի եւ քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

ՀՈՂԿԱԾ 1. «Գեոդեզիայի եւ քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-179 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ՀՈՂԿԱԾ 1. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

գեոդեզիա՝ երկրագնդի ձեւի, չափերի, ծանրաչափական դաշտի, Երկրի մակերեւույթի կետերի կոորդինատների որոշման հետ կապված գիտական, տեխնիկական եւ արտադրական գործունեության ընթացքում ծագող հարաբերությունների ոլորտ.

գեոդեզիական եւ քարտեզագրական գործունեություն՝ գեոդեզիայի եւ քարտեզագրության բնագավառում գիտական, տեխնիկական, արտադրական եւ կառավարչական գործունեություն, գեոդեզիայի եւ քարտեզագրության ոլորտում ծառայությունների մատուցման գործունեություն.

գեոդեզիական կետ՝ կառուցվածք, որով տեղանքում տեղադրված են երկրագնդի ֆիզիկական մակերեւույթի կետերը որոշվող կոորդինատներով եւ բարձրություններով.

գեոդեզիական ցանց՝ մեկը մյուսին կապակցված գեոդեզիական կետերի ամբողջություն.

գեոդեզիական եւ քարտեզագրական աշխատանքներ՝ գեոդեզիական եւ քարտեզագրական նյութերի ու տվյալների, ինչպես նաեւ արտադրանքի ստեղծման գործընթաց.

Երկրագնդի հեռահար զոնդավորում՝ գործընթաց, տիեզերքից կատարված նկարահանումների միջոցով Երկրի մակերեւույթի վերաբերյալ տվյալների ստացում.

կոորդինատային համակարգ՝ երկրագնդի ֆիզիկական մակերեւույթի կետերին կոորդինատներ վերագրելու մաթեմատիկական կանոններ.

մասշտաբ՝ համամասնություն, որը սահմանում/հաստատում է հարաբերակցությունը քարտեզագրական պատկերում արտահայտված օբյեկտի գծային չափերի եւ բնության մեջ նրա իրական չափերի միջեւ.

մասշտաբային շարք՝ Հայաստանի Հանրապետության համար ընդունված պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների եւ հատակագծերի որոշակի մասշտաբների հստակ համակարգ.

տեղական կոորդինատային համակարգ՝ պայմանական կոորդինատային համակարգ սահմանված սահմանափակ տարածքի համար Հանրապետության վարչատարածքային միավորը չգերազանցող, որի կոորդինատների սկիզբը եւ կոորդինատային առանցքների կողմնորոշումը շեղված է պետական միասնական կոորդինատային համակարգի նկատմամբ, որը կկիրառվի գեոդեզիական եւ քարտեզագրական աշխատանքների իրականացման ժամանակ.

տարածական տվյալներ՝ օբյեկտների վերաբերյալ տարածական տեղեկություններ, որոնք ընդգրկում են իրենց մեջ տեղեկություններ դրանց տեղադիրքի, ձեւի եւ հատկությունների մասին.

տարածական մետատվյալներ՝ տվյալների հավաքածու, որոնք թույլ են տալիս նկարագրել տարածական տվյալների բնութագրերը.

քարտեզագրություն` քարտեզների ուսումնասիրման, ստեղծման եւ օգտագործման հետ կապված գիտական, տեխնիկական եւ արտադրական գործունեության ընթացքում ծագող հարաբերությունների ոլորտ.

քարտեզագրագեոդեզիական ֆոնդ` գեոդեզիական եւ քարտեզագրական գործունեության իրականացումից ստեղծված եւ հետագա օգտագործման նպատակներով երկարատեւ պահպանման ենթակա նյութերի ու տվյալների հավաքածու: >>:

ՀՈՂԿԱԾ 2. Օրենքի 2-րդ հոդվածում`

1) 2-րդ մասի ժա) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

<<ժա) նավիգացիոն գործունեության իրականացման նպատակով գեոդեզիական դիտարկումներ.>>.

2) 4-րդ մասի բ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

<<բ) հանութային աշխատանքների իրականացումը, պետական մասշտաբային շարքի տեղագրական, հատուկ եւ նավիգացիոն քարտեզների ստեղծումը, դրանց թարմացումը եւ բազմացումը.>>.

3) 4-րդ մասի գ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

<<գ) երկրագնդի հեռահար զոնդավորման արդյունքում ստացված նյութերի մշակումը, տիեզերական եւ օդահանութային (աէրոհանութային) աշխատանքների արդյունքում ստացված նյութերի ֆոտոգրամետրիկ մշակումը` քարտեզների ստացման նպատակով.>>.

4) 4-րդ մասի գ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

<<գ) աշխարհագրական անվանումների պետական գրանցման իրականացումը, աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի ստեղծումն ու վարումը եւ դրանց տվյալների հիման վրա պաշտոնական տեղեկատուների, ընդհանուր եւ թեմատիկ բառարանների, ցանկերի ստեղծումն ու հրատարակումը.>>.

5) 4-րդ մասի է) կետում << ազգային ատլասի>> բառից հետո լրացնել <<Աշխարհի Մեծ ատլասի, կրթական համակարգի համար ուսումնական եւ այլ պաշտոնական քարտեզների>> բառերը.

6) 4-րդ մասի թ) կետում <<պետական>> բառից հետո լրացնել <<բազային>> բառը.

7) 4-րդ մասի ժբ) կետը հանել.

ՀՈՂԿԱԾ 3. Օրենքի 5-րդ հոդվածի ե) կետում <<(այդ թվում` Հայաստանի Հանրապետության հերթապահ տեղեկատու քարտեզի) բառերը հանել.

ՀՈՂԿԱԾ 4. Օրենքի 11-րդ հոդվածում`

1) 5-րդ մասից հետո լրացնել նոր 6-րդ և 7-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ`

«6. Տարածական տվյալների տեղեկատվական ենթակառուցվածքը հանդիսանում է տեղեկատվական ռեսուրսների ամբողջականություն, որը նախատեսված է տարածական տվյալների հավաքագրման, մշակման, վերլուծության, արդիականացման, պահպանման եւ սպառողին տվյալների տրամադրման համար և բաղկացած է պետական տարածական տվյալների բանկից, ձյուդային, տարածքային եւ համայնքային

տարածական տվյալների բանկից, մետատվյալների բանկից, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց տարածական տվյալների բանկից:

7. Տարածական տվյալների Հայաստանի Հանրապետության տեղեկատվական ենթակառուցվածքի կազմը, ձևավորումը, վարումը և տեղեկատվության տրամադրման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀՈՂԿԱԾ 5. Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասում <<, համայնքի վարչական սահմաններից դուրս՝ մարզպետը: Մարզպետները և համայնքների ղեկավարները>> բառերը հանել, <<պարտավոր են>> բառերը փոխարինել <<ով պարտավոր է>> բառերով:

ՀՈՂԿԱԾ 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

<<ԳԵՈՂԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐԿԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| Առարկության, առաջարկության հեղինակը | Նախագծի հոդված | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն |
|--|----------------|---|---|
| <p><< Աժ պատգամավոր Լ.Ալավերդյան</p> | | <p>Առաջարկվում է ընդհանրապես օրենքի նախագծում տրվող փոփոխություններն ու լրացումները առավել հստակեցնել՝ տարակարծություններ չառաջացնելու համար և միջոցներ ձեռնարկել օգտագործողների կողմից (մասնավորապես <<Հայաստանի Հանրապետություն>> թերթը) պաշտոնական քարտեզները նույնությամբ, առանց աղավաղելու օգտագործելու համար:</p> | <p>Ընդունվել է: Օրենքի նախագծում իրականացվել են հստակեցումներ և ներկայումս միջոցներ են ձեռնարկվում <<Հայաստանի Հանրապետություն>> թերթի կողմից պաշտոնական հրապարակված քարտեզից օգտվելու համար:</p> |